

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՂՕԹՔ Ե. Վ. ՃՄԻՃ Ե. Ի

ԱՊԱՌԻՆՈՒՄԻՆ ԼԱՄՈՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը խորապէս զգածուած է. Վ. Ճորճ Ե. ի հիւանդութեան լուրէն, հետեւեալ հեռագիրը քաշեց Քէնթըրպրի Ս. Արքեպիսկոպոսին, 1928 Նոյեմբեր 30ին.

—Մենք եւ մեր ժողովուրդը խորապէս կը ցաւինք մեր սիրեցեալ Ալեհապետին եկամեցուրեան առիւ: Ջերմեամբ օրտալ կ'աղօրենք Ամենակարողին՝ Ե. Վեհափառութեան փաւրով ապաւինելու համար եւ կ'ապաւենենք մեր բարի լուրերուն:

Պատրիարք Հայր
ԴՈՒՐԵԱՆ

Ե. Ամեն. Սրբազնութիւն, Քէնթըրպրի Արքեպիսկոպոսին Ս. Պատրիարքին՝ թէ՛ հեռագիրով եւ թէ՛ նամակով, որոնց երկուքն ալ թարգմանութիւնը կը ղնենք:

Հեռագիրը, Դեկտեմ. 10 րուակիր.

Նրուստղէմի Հայր Պատրիարքին

—Ե. Վ. Թագուհին, Քենթըրպրի Արքեպիսկոպին ձեռքով ընդունեցաւ Ձեր համակրական հեռագիրը, զոր ուղղած էիք Ե. Վ. Թագուհիին եկամեցուրեան առիւ, յայտնելով Ձեր եւ մեր ժողովուրդին ցաւակցութիւնն ու աղօթքները: Ե. Վ. Թագուհին իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ Ձեզ:

Ամենակազմ Բարաուդար

Նամակը, 1928 Դեկտեմ. 10 րուակիր.

—Ամենապատիւ եղբայր Ի Քրիստոս.

Անկեղծօրէն շնորհակալ եմ Ձեզ՝ մեր եւ մեր ժողովուրդին արտայայտած համակրանքին համար, որով կը մասնակցէք Բրիտանական Կայսրութեան ժողովուրդին անձկութեան՝ մեր սիրելի Թագուհին առողջութեան մասին: Մենք յոյս ունինք որ պիտի ապաքինի Ե. Վեհափառութիւնը: Պատիւ համարեցի ինձ հաղորդել Ե. Վ. Թագուհիին Ձեր Ամեն. Սրբազնութեան հեռագիրը, զոր ուղղած էիք ինձ այնքան աղնաութեամբ, եւ զոր կը գնահատեմ մեծապէս:

Ձեր անկեղծ եղբայրն Ի Քրիստոս
Լեզմոս ԼԼԵԿ

ՍԷՅՆԹ ՃՕՐՃԻ ՄԷՁ

Թագաւորին սպարինման համար մասնաւոր պաշտամունք (Service of Intercession) մը տեղի ունեցաւ Ս. Քաղաքիս անկիրան Ս. Ճորճ Մայր եկեղեցւոյ մէջ, Դեկտեմ. 7, Ուր, Մէկինէս հայկոպոսի նախագահութեամբ, եւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն այդ պաշտամունքին ներկայ գտնուեցաւ Պարքին. Փոխանորդ Դեր. Տ. Մկրտիչ Նպւ. Աղաւնուհի, Հօգ. Կիւրեղ Վրդ. ի

հետ, եւ պաշտամունքէն հտրը Մէկինէս Սրբազնին հաղորդեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր ողջոյններն եւ աղօթքները Վեհափառ Թագաւորին առողջութեան համար:

Ե. ՎԱՅՄ. ԲԱՐՁՐ ԳՅՄԻՍԷԼԻՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Ե. Վաւմ. Պաղեստինի եւ Անդր-Յորդանանու Բարձր Գովախը Սրբ. Ճօն Չէնդըրը, Պաղեստին ժամանեց 1928, Դեկտեմ. 6, եւ առաւին ժամը 10ին մեծ հանդիսութեամբ մտաւ Երուսաղէմ: Ընդունելութիւնը կատարուեցաւ Եաֆայի դրան մօտ կառուցուած առժամանակեայ փայտակերտ տաղուարին մէջ, Բոյրը հոգեւոր պետեր պաշտօնապէս հրաւիրուած էին ընդունելու Ե. Վաւմութիւնը: Ամեն. Ս. Պատրիարք Հայր, Հօգ. Տ. Կիւրեղ Վրդ. Խաւաթլեանի եւ Պատրիարքարանիս Դիւանապետ Տիար Կ. Նուրեանի հետ ներկայ գտնուեցաւ ընդունելութեան հանդիսին:

Ե. Վաւմութիւնը կէսօրին ալ երուսաղէմի կառավարչատան մէջ կատարեց իր երդման արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցան Պաղեստինի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաները եւ հոգեւոր պետերը: Ամեն. Ս. Պատրիարք Հայր, այս հանդէսին ալ ներկայ գտնուեցաւ Հօգ. Տ. Կիւրեղ Վրդ. ի հետ:

ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՆՈՒԱՃԱՄԱՆ 19ԻՒ ՏԱՐԵՒԱՐԶԸ

1928 Դեկտեմ. 9, Կիր. օր Մեծն Բրիտանիոյ զորջին տակ երուսաղէմի նուաճման տարեդարձն էր: Այս առթիւ մեր (Հայր) կողմէն զօհարանական մաղթանքներ կատարուեցան Ս. Յորութեան տաճարին մէջ, Ս. Պատարագի աւարտումէն հտրը, եւ այդ առթիւ մասնաւորապէս աղօթքներ եղան Անդրիոյ Վեհ. Թագաւորին առողջութեան համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ե. Վ. Պաղեստինի եւ Անդր-Յորդանանու Բարձր Գովախը, Սրբ. Ճօն Չէնդըրը, 1928 Դեկտեմ. 20 եւ, առաւին ժամը 10, 30ին պաշտօնական ընդունելութիւն մը ըրաւ հոգեւոր պետերուն, Երուսաղէմի կառավարչատան մէջ: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը անձամբ պատասխանեց իրեն եղած հրաւերին, հետեւ ունենալով Հօգ. Տ. Կիւրեղ Վրդ. Ե. Վ. Բարձր Գովախը շատ սիրալիկ ընդունելութիւն ըրաւ Ս. Պատրիարքին եւ ըստն փայրկեան առանձինն տեսնուեցաւ Ե. Ամեն. Սրբազնութեան հետ, հետաքրքրական հարցումներ ընելով ընդհանրապէս հայ ժողովուրդի եւ մասնաւորապէս Պաղեստինի Հայր ժաման, եւ մեկնումի պահուն ըստ թէ կը փափարի նմանեղէն հտրը այցելել Հայր Պատրիարքարանին:

ՄՐՅԱՆԱԿ

Նիս ետրէն Տիար Վ. Մ. Քիւրքեան մրցանակներ տանձնած էր ԱՍՊԵՏ ԼՊԱՐԻՏ զիրքին վրայ լաւագոյն ուսումնասիրութիւնը գրող զարգացական պատանիներուն: Առաջին մրցանակը (25 տոլար) շնամ է միւր ժառանգաւորաց Վարժարանի Զորքորդ Դասարանի աշակերտներէն Միհրան Գապագեան:

Տպարան Սուրբոց Յակոբեանց, Երուսաղէմ